ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 363-Ա **08 սեպտեմբերի 2023 թ.**

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 7-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցության նպատակով <<Գավառի մանկատուն>> ՊՈԱԿ-ի թվով 60 սանի սույն թվի օգոստոսի 31-ին ժամը 10:00-ից 20:00-ն ներառյալ Սևանա լճի ափին գտնվող <<WHITE SHORJA>> հանգստյան գոտում հյուրընկալվելու ճանապարհածախսը հոգալու համար հատկացնել 200000/երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել <<Գավառի մանկատուն>> ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Նաիրա Խանդանյանին:

08.09.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503